



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հուլիսի 2017 թվականի թիվ 138-Ա

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին» N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1)-ին ենթակետով՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. 2017 թվականի հուլիսի 3-ից լուծել «ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշենի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիանա Սանասարի Ալավերդյանի հետ 2012 թվականի հուլիսի 3-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև մրցույթով տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելը 2017 թվականի հուլիսի 3-ից Լիանա Սանասարի Ալավերդյանին նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշենի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար և կնքել աշխատանքային պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ԱՐՈՎՅԱՆ

2017թ. հուլիսի 3
ք. Իջևան